ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 101-Ն **«03» օգոստոսի 2023 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ 31-Ի N 32-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման ճանապարհային քարտեզը՝ համաձայն Հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 31-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշման կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 32-Ն հրամանը»:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X _____

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

/ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ/

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
2023 թ.----------հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

NN	**Միջոցառումներ**	**Ակնկալվող արդյունք**	**Համակատարող**	**Ժամկետ**
1.	Առարկայական չափորոշիչների և օրինակելի ծրագրերի լրամշակում և հաստատում հետևյալ ուղղություններով՝ բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա (այսուհետ՝ ԲՏՃՄ), «Հայոց լեզու, գրականություն», «Օտար լեզուներ», «Հասարակություն, հասարակական գիտություններ», «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» «Արվեստ» և «Տեխնոլոգիա»:	Նախարարի հրամանով հաստատված առարկայական չափորոշիչներ և օրինակելի ծրագրեր՝ փորձարկման համար	ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ, Համաշխարհային բանկ	2021թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ

2.	ԲՏՃՄ, «Հայոց լեզու, գրականություն», «Օտար լեզուներ», «Հասարակություն, հասարակական գիտություններ», «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» «Արվեստ» և «Տեխնոլոգիա» ուղղություններ դասավանդման և ուսումնառության նյութերի մշակում 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարանների համար՝ փորձարկման համար: Գործընթացի կազմակերպում 3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ, այնուհետև՝ 1-ին, 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարանների համար:	Դասավանդման և ուսումնառության մշակված նյութեր	ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, ՊՀ, ԿԳՄՍՆ Համաշխարհային բանկ	2021թ. փորձարկվող դասարանների առաջին կիսամյակի նյութերը՝ մինչև հունիսի 3-րդ տասնօրյակ, 2-րդ կիսամյակի նյութերը՝ մինչև դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ 2022թ. առաջին կիսամյակի նյութերը՝ մինչև հունիսի 3-րդ տասնօրյակ, 2-րդ կիսամյակի նյութերը՝ մինչև դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ /3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ դասարաններ/ 2023թ.առաջին կիսամյակի նյութերը՝ մինչև հունիսի 3-րդ տասնօրյակ, 2-րդ կիսամյակի նյութերը՝ մինչև դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ /1-ին, 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններ/

3.	Ուսուցիչների վերապատրաստում ըստ լրամշակված առարկայի չափորոշիչների: 1.Չափորոշիչները փորձարկող դպրոցների ուսուցիչների վերապատրաստումը՝ մինչ փորձարկումը: -«ԵՄ-ն նորարարության համար» ծրագիր -«Կրթության բարելավում» ծրագիր 2.Լայնածավալ վերապատրաստումներ առարկայական չափորոշիչների և օրինակելի ծրագրերի ներդրմանն ընդառաջ (հանրակրթական ուսումնական բոլոր հաստատությունների մանկավարժների, վարչական աշխատողների վերապատրաստումներ.	Մեթոդապես և բովանդակային առումով նոր չափորոշիչների փորձարկմանը և ամբողջական կիրառմանը պատրաստ ուսուցիչներ և վարչական աշխատողներ	«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, ՊՀ, ԿԳՄՍՆ Համաշխարհային բանկ, ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ	1. 2021թ.հունվար-դեկտեմբեր 2. 2022թ. հունվար-դեկտեմբեր, 2023 թ. հունվար-հունիս, շարունակաբար՝ մինչև 2026 թ.:
4.	Նոր չափորոշիչներին համապատասխան՝ գնահատման կարգի մշակում, փորձարկում և ներդրում:	Նոր չափորոշիչներին համապատասխան գնահատման մշակված նոր կարգ, չափանիշներ և գնագատման ընթացակարգ	ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Համաշխարհային բանկ, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ	Իրականացվելու է փուլային եղանակով՝ սույն հավելվածի 9-14-րդ կետերով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

5.	Լաբորատոր սարքավորումների և գույքի, ինչպես նաև համակարգչային սարքավորումների ձեռքբերում՝ փորձարկող դպրոցների համար Լաբորատոր սարքավորումների և գույքի ձեռքբերում մյուս դպրոցների համար՝ ըստ գույքագրված կարիքների:	Լրամշակված առարկայական չափորոշիչներին համապատասխան լաբորատոր սարքավորումներ և հագեցվածություն դպրոցներում	ԵՄ,«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, ՊՀ, ԿԳՄՍՆ Համաշխարհային բանկ, ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2021թ.-2026թ.
6.	1. Առարկայական չափորոշիչների և ծրագրերի, գնահատման կարգի փորձարկում դպրոցներում, դրանց արդյունքում չափորոշիչների և ծրագրերի, գնահատման չափանիշների լրամշակում և հաստատում, մասնավորապես՝ - «ԵՄ-ն նորարարության համար» ծրագիր՝ ԲՏՃՄ առարկայական չափորոշիչների Տավուշի մարզի բոլոր դպրոցներում 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններում: - «Կրթության բարելավում» ծրագիր՝ «Հայոց լեզու, գրականություն», «Օտար լեզուներ», «Հասարակություն, հասարակական գիտություններ», «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» «Արվեստ» և «Տեխնոլոգիա»-ի լրամշակված չափորոշիչների և ծրագրերի փորձարկում նախապես ընտրված դպրոցներում 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններում: -«Հայոց լեզու, գրականություն», «Օտար լեզուներ», «Հասարակություն, հասարակական գիտություններ»,	Առարկայական չափորոշիչների փորձարկման արդյունքներ, դրանց արդյունքում լրամշակված և հաստատված չափորոշիչներ	«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, ՊՀ, ԿԳՄՍՆ Համաշխարհային բանկ ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ Ընտրված դպրոցներ	1.2021թ. սեպտեմբեր-2022թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ /ԵՄ/ 2021թ. հունվար-մայիս /Կրթության բարելավում/ 2.2022 թ.սեպտեմբերի 1-2023 մայիսի 3-րդ տասնօրյակ

	«Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» «Արվեստ» և «Տեխնոլոգիա»-ի լրամշակված չափորոշիչների և ծրագրերի փորձարկում 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններում:			
7.	Առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերջնական լրամշակումից հետո դասագրքերի մշակում և հրատարակություն:	Առարկայական նոր չափորոշիչներին համապատասխան հրատարակված դասագրքեր	ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ Դասագրքերի և տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ	Իրականացվելու է փուլային եղանակով՝ սույն հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան:
8.	Չափորոշչի ամբողջական ներդրմանն ուղղված գործիքակազմի մշակում և ներդրում, այդ թվում՝ ուսուցչի դրույքաչափի փոփոխություն՝ ֆինանսավորման նոր մեխանիզմի փորձարկման նպատակով՝ տարրական դասարաններում սահմանելով շաբաթական 18 դասաժամ /+4 դասաժամ՝ պաշտոնի նկարագրով սահմանված գործառույթների իրականացման համար/, 20 դասաժամ՝ միջին և ավագ դասարանների համար /+2 դասաժամ՝ պաշտոնի նկարագրով սահմանված գործառույթների իրականացման համար/:	Չափորոշչի ամբողջական ներդրումն ապահովող մշակված գործիքներ	ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ	Իրականացվելու է փուլային եղանակով՝ սույն հավելվածի 9-14-րդ կետերով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

	Դպրոցներին առավելագույն ժամաքանակով ֆինանսավորման մեխանիզմի փորձարկում՝ ներդնելով խմբակների և նախագծային ուսուցման ֆինանսավորման մեխանիզմ:			
9.	Լրամշակված բոլոր առարկայական ծրագրերի և չափորոշիչների փորձարկում Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններում: Բոլոր առարկայական ծրագրերի և չափորոշիչների փորձարկում Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների **3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ** դասարաններում:	Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների փորձարկում	ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ	2022 թվականի սեպտեմբերի 1-ից - 2023 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակ
10.	Բոլոր առարկայական ծրագրերի և չափորոշիչների փորձարկում Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների **1-ին, 4-րդ, 9-րդ, 12-րդ** դասարաններում:	Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչները փորձարկված են	ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ	2023 թ. սեպտեմբերի 1-ից-2024 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ

11.	Բոլոր առարկայական ծրագրերի և չափորոշիչների փորձարկում ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների **2-րդ, 5-րդ, 7-րդ** դասարաններում:	Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչները փորձարկված են	ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ	2023 թ. սեպտեմբերի 1-ից-2024 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ
12.	Բոլոր առարկայական ծրագրերի և չափորոշիչների փորձարկում ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների **3-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ** դասարաններում:	Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչները փորձարկված են	ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ	2024 թ. սեպտեմբերի 2-ից-2025 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ
13.	Բոլոր առարկայական ծրագրերի և չափորոշիչների փորձարկում ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների **1-ին, 4-րդ, 9-րդ, 11-րդ** դասարաններում:	Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչները փորձարկված են	Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչները փորձարկված են	2025 թ. սեպտեմբերի 1-ից-2026թ. մայիսի 3-րդ տասնօրյակ

14.	Բոլոր առարկայական ծրագրերի և չափորոշիչների փորձարկում ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների **12-րդ** դասարաններում:	Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչները փորձարկված են	Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչները փորձարկված են	2026 թ. սեպտեմբերի 1-ից-2026թ. մայիսի 3-րդ տասնօրյակ
15.	Չափորոշչի ամբողջական ներդրում ՀՀ բոլոր ուսումնական հաստատություններում:	Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչները ներդրված են	ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ	2027 թ. սեպտեմբերի 1-ից